

դէն հիւսուածքներ՝ որոնք բնիկ կարկաթայէն ծաղած են. Յ. Ք.) որ կու գայ Մոկուլին (Հնդկաստան) երկրէն»:

«Թէեւ արմատները, որոնք գետնէն կը քաշուին, շատ երկար են, սակայն զանոնք կը կտրատեն ոչ աւելի խոշոր քան մարդու մը ձեռքը, աւելի հեշտիւ փոխադրելու համար: Զարմանալի երեւոյթ է տեսնել Օրմուզի մէջ ամբողջ կարաւաններ բեռցած այս Ռոնասով, ուրկէ կը ղրկուին Հնդկաստան»⁽⁶⁷⁾:

Տորոնի ներկելու յատկութիւնը ծանօթ էր հիներուն, եւ երկար ժամանակի մը համար մշակուած էր Փոքր Ասիոյ մէջ, ուր երկրորդ եւ երրորդ տարուան աճումին՝ հիւթեղ արմատները կը չորցուէին ու կը պատրաստուէին գործածուելու»⁽⁶⁸⁾: Բուլանըն «Կարմիր գոյնը կարելի է ստանալ՝ մանածը նախ ջրով եռացնելով, յետոյ մանրած գիտոր եւ տորոն վրան ցանելով եւ լաւ խաշելով»⁽⁶⁹⁾:

Ու. Է. Տ. Ալլէն կը գրէ. «Տորոն ու Սաֆրանը որ մեծ քանակութեամբ կը մշակուէր Վրաստանի, Շիրվանի եւ Արանի մէջ, երկու բուսային արտադրութիւններ էին Իսլամի ներկող եւ հիւսող արտադրութեամբ երկիրներուն համար եւ կենսական բերքեր: Տորոնը, եւ յատկապէս անոր արմատները, գորգեր ներկելու համար ամենակարեւոր տունկերէն մին էր: Մինակ գործածուելով կարմիրի բազմաթիւ երանգներ կու տար ճոխ շիկակարմիրէ մը մինչեւ ազնիւ երանդ մը վարդագոյնի, եւ Պարսկական գորգերուն ամենահասարակ գործածած կարմիրը կը պատրաստուէր խառնուրդով պղլեղի ջուրի, խաղողաջրի եւ տորոնի: Լեզակի վրայ դրուելով, տորոնը կու տար թուխի երանգներ, մինչ պարսկական ճոխ կապոյտը հակառակ կերպով կը պատրաստուէր. լեզակ եւ ուրիշ նիւթեր խառնելով տորոնը կը ստացուէր՝ բազմաթիւ տարբերակներ ծիրանագոյնի, կաթով եւ ջուրով խառնուած, ինչպէս նաեւ թթուած խաղողաջրով մանիշակաւոյն կը ստացուէր»⁽⁷⁰⁾:

Քիչ առաջ տեսանք որ գիտոր ալ կը գործածուէր ներկելու առտին: Պէտք է հոս ըսել որ շատ առատ են օտար վկայութիւններ, որոնց համաձայն հայերը գլխաւոր վաճառականներն էին Եւրոպայի համար խիստ կենսական այդ ներկանիւթին:

Տորոնի մասին աւարտելէ առաջ ըսեմ որ չեմ գիտեր թէ տորոնն է որ կը յիշուի իբր հայ վաճառականներէն ԺԳ-ԺԵ դարերուն Բրիւս տարած ապրանքներուն կարգին: Սարուխան կ'ըսէ. «Bresis, որ ներկելու փայտ է»⁽⁷¹⁾:

Հայկական կարմիրի մը մասին կը վկայէ նաեւ Ստրաբոն, ըստ

(67) Collection of Travels, London, 1684, Vol. I, p. 19.

(68) Oriental Rugs, New York, 1927, p. 382.

(69) Ազգ. Հանդէս, 1899, թիւ 1, էջ 69:

(70) A History of the Georgian, London, 1932, p. 326.

(71) «Հանդ. Ամս.», 1935, էջ 73: